

կան ցոյցերը որովհետ պիտի ուղղուին: Շէն-
քերուն, խմբագիրներուն, զբաշարներուն
թէ պարզագլու Բասմետու մէջ եղած տա-
ռերուն:

Յանձնաժողովը չէ՛ ճշգրտած այդ կէտը որ
սակայն խիստ կարեւոր է:

Եթէ շէնքերուն պիտի ուղղուի՝ պէտք է
ըսել որ անոնց արժանապատուութիւնն ու
համեստութիւնը չափազանց պիտի վիրաւո-
րուի, որովհետեւ Հայ թերթերու խմբագ-
րատանց շէնքերը գոթախոտաբար ներկայա-
նայի վիճակի մը մէջ չեն և եթէ թափոթին
տարաբաններ ալ պիտի մասնակցին, այդ
համակրական ցոյցը շատ կը վտանամ որ
չեզի իր նպատակէն:

Իսկ եթէ ցոյցը պիտի ուղղուի խմբա-
գիրներուն՝ կարծեմ անոնց վրայ ալ մեծ
ազդեցութիւն մը չպիտի գործէ, որովհե-
տեւ անոնք վարժաւած են տարին տասներ-
կու ամիս այդ տեսակ պատանական համակ-
րութիւններու արժանանալու:

— Սքանչելի՛ ես զրեք, հիանալի ես զրեք,
շատ աղուոր զրեք, կեցցե՛ս, սմէրիմ, ապ-
րի՛ս...

Տողրակներով կայ այդ ապրանքէն մեք
քովը:

Գալով զբաշարներուն՝ անոնք համակրա-
կան ցոյցը մէկ ձեւով կ'ըմբռնեն. որ է՝
օրականի յաւելում, առանց թափոթի, ա-
ռանց ծափահարութեան:

Նկատելով այս ամէնը, մենք խմբագիր-
ներս, որոշած ենք խմբագրատանց առջեւ
կատարուելիք համակրական ցոյցերը ըն-
դունիլ իբրեւ ուղղուած հոն զտնուող տա-
ռերուն:

Նոյնիսկ միտք ունինք թափօրը կազմու-
նելուն համակրական ցոյցը փոխարինելու
համար, եստաները իրենց գլխուն պարպել:

Սքրուն չէ՛ Հայ տառերու գիւտը հան-
դիսաւորագլու տօնելու այս եղանակը:

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

ՇԱՌԱԹ ՄԵ

ՌՈՒՄԱՆՈՅ ՄԷՋ

Մ

ՇՈՂԵՆԱԻՆ ՄԵԿՆԵԼԷՆ Ա Ռ Ա Ջ

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ, ԳԱՂԱՔԱԿԱՆ,
Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՆՕԹԵՐ, ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒ ԽՈՐՀՐԴԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցած Սեպտեմբերին 14/ին, շա-
բաթ օրը, զեղեցիկ օդով մը ռումա-
նական Տալիա շոգենաւը մտայ, Քէօս-
թէն ճէ երթալու համար:

Պուէն Քէօսթէն Նշանակութե-
նէ զուրկ, անկարեւոր ուղեւորութիւն
մը: Բայց նոր բէժիմին համար: Եթէ
ասանկ բան մը հին բէժիմին օրով ը-
նել ուղէինք, ի՛նչ միջոցներու պիտի
զիմէինք, ի՛նչ արգելքներու պիտի
հանդիպէինք:

Արդէն, ոտքը Պուէն զուրս գնե-
լը՝ ամէն Հայու գործը չէր: Ատոր ան-
հրաժեշտ պէտք ունեցողներն ալ, իբր
ամենէն կարճ ու ապահով միջոց
ընտրած էին, Պատրիարքարանին Գա-
լիու-Օղլանը Արթին Էֆ.ին, Պարտի-
զա՛ցի վահան վարդապետին, կամ ա-
սոնց կարգէն ոստիկանութեան ծանօթ
ու վստահելի անձերու ձեռքով՝ Հէյե-
թը Թահթիքիէի բէիսին ու անոր մար-
դոցը հետ սակարկութեան մտնել, և,
ա՛լ մարդուն համեմատ, 5-10-20 սսկի
վճարելով, արտօնութիւն մը առնել:

Ու ասիկա՝ մինակ Պուէն զուրս
ելլելու համար: Վերագործին, հար-
ցաքննութեան ենթարկուելու, տագ-
նապններ անցընելու, քանի մը որ բան-
տը մնալու վախը կար ու կը մնար:
Մինչդեռ հիմա, երբ արտասահման
ուղեւորութիւն մը ընելու որոշումը
տուի, ուղղակի, Սիրքէճի ուղեւորնե-
րու սալօնը գացի, Օսմանիէի թէզքէ-
րէս բարքոսի պաշտօնէին ցոյց տուի
և 63 զրուշ վճարելով, երկու վար-
կեանի մէջ բարքոս ասի պաշտօն-
եայէն, որ անուշիկու, ինզուսերես
ծերուկ թուրք մը, կարգ մը տնդե-
կութիւններ ալ տուաւ, ինծի օգուս-
կար ըլլալու համար:

Ասիկա՝ անանկ զիւրութիւն մըն է
որ կարելի չէ, և նոյնիսկ ներելի ալ
չէ, հին բէժիմին մէջ եղածներն
հետ բաղդատութեան դնել: Բայց և
այնպէս, արտասահման երթալու մէկ
արտօնութեան մը համար ալ՝ 63 զր-

ՀՈԿՏԵՄԲԵՐ 13Ի ԹԱՓՕՐԸ

Այսպէս ուրիմն, Մեծ Յօրիւրանի հանգե-
ներուն կազմակերպիչ Յանձնաժողովը որո-
շած է որ եկեղեցական արարողութենէն
յետոյ թափօր մը կազմուի՝ որ Մայր եկե-
ղեցիէն մեկնելով, Պապը Սլիի ճամբով այ-
ցելէ Հայ Թերթերու խմբագրատանները և
համակրական ցոյցեր ընէ անոնց առջեւ:
Թնգիր է սակայն զիսնալ թէ համակրա-